

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 528
ՈՒՂԵՐՁ

Թերթերը՝ 2:— **Պրակները՝** 1, երկու թերթից բաղկացած:— **Մեծությունը՝** 46.6×30×1.3 սմ.:— **Նյութը՝** սպիտակ, դիմացկուն հաստ թուղթ:— **Կազմը՝** սրճագույն կաշվով ծածկված հաստ ստվարաթուղթ: —**Պահպանակներ՝** սկզբում և վերջում մեկական հաստ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթեր՝** չկան:— **Տողերը՝** 29 և 15:— **Գծումները՝** մատիտով քաշված:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Թիֆլիսի հայ վաճառականները:— **Ժամանակը՝** 12—14 Հոկտեմբերի 1913 թ.:— **Վայրը՝** Թիֆլիս:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 Մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագիր ուղերձը հղված է Գևորգ Ե. ամենայն հայոց կաթողիկոսին Թիֆլիսի հայ վաճառականների կողմից: Ստորև տրվում է բուն տեքստը և ստորագրությունները):

Թ. 1բ.— Նորին Սրբութեան
Տ. Տ. Գէորգ Ե.
Սրբազնագոյն Կաթողիկոսին
Ամենայն Հայոց
Վեհափառ Տէր,

Թիֆլիսի Հայ վաճառականութիւնը, որ հանդիսանում է Կովկասի Հայ առևտրական աշխարհի մէջ աւագագոյն անդամ իր բազմութեամբ և հնութեամբ, չէր կարող անտարբեր մնալ դէպի այն կոչը, որ Ձեր Վեհափառութիւնը բարեհաճել էր անել իրան, հրաւիրելով, իբրև Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ հարազատ զաւակ և իբրև Հայ ժողովրդի մի ստուար դասակարգ, մասնակցել Հայ գրերի գիւտի 1500-ամեակի և Հայ տպագրութեան 400-ամեակի միացեալ փառաւոր Յոբելեանին, որի տօնախմբութիւնը կատարվում է այսօր Ս. Էջմիածնում, իբրև Համազգային Հանդէս, Ձեր Վեհափառութեան նախագահութեան ներքոյ:

Վաճառականութիւնը ամենամեծ պատրաստակամութեամբ և համակրութեամբ ընդունեց իրան արած այդ մեծ պատիւը, նախ իբրև հարազատ զաւակ Մայրենի Եկեղեցոյ, երկրորդ ի նկատի ունենալով, որ ներկայ Յոբելիանը մինն է այն դուզնագիւտ Յոբելիաններից, որոնց կը նախանձէին շատ աւելի մեծ ազգեր, որովհետև քիչ ազգեր կարող են պարծենալ պատմական այնքան խոր հնութիւն ունեցող փառապանծ ակտով, որպիսին հանդիսանում է գրերի գիւտը 1500 տարի առաջ, իբրև ապացոյց Հայ ժողովրդի քաղաքակրթութեան խորին հնութեան: Բայց Հայ վաճառականութիւնն ունէր և մի ուրիշ դրդիչ պատճառ մասնակցելու այս Մեծ Յոբելիանին, վերյիշելու համար պատմական այն անհերքելի փաստը, որ եթէ Հայ գրերի գիւտը կատարուեց Հայոց Եկեղեցոյ անմահ ներկայացուցիչների ջանքերով և աշխատութեամբ, Հայ տպագրութիւնը, իբրև ոչ պակաս կարևոր գործօն Հայ ազգի քաղաքակրթութեան, իր ծագումը և զարգացումը (թ. 2ա) պարտական է մեծ չափով նաև Հայ առևտրական դասի ներկայացուցիչներին, որոնք հասկանալով տպագրութեան անհագին կարևորութիւնը՝ չխնայեցին իրանց միջոցները Հայ ժողովրդին ևս հաղորդակից անելու քաղաքակրթութեան այդ մեծ գործօնի բարիքներին:

Եւ ամենամեծ ուրախութեամբ, Վեհափառ Տէր, ընդունելով Ձեր հրաւէրը՝ գալ և երկրպագել Օշականում հանգչող Մեծ Գտչի պաշտելի աճիւններին, Հայ վաճառականութիւնն իր բարոյական պարտքը համարեց նպաստել «Մեսրոպեան լումայի», որ Ձեր Վեհափառութիւնը սահմանեց ի յաւերժացումն Հա-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից և 1981 թվականի № № Ա—Դ-ից:

մազգային այս Մեծ Տօնի, և խոնարհաբար խնդրում է ընդունել իր չնչին լուման և թոյլ տալ մեզ՝ պատգամաւորներիս, որդիական խորին ակնածութեամբ մատուցանել Թիֆլիսի համայն Հայ վաճառականութեան ջերմեռանդ և սրտաբուխ շնորհաւորութիւնները, ի դէմս Ձեր Վեհափառութեան, Համազգային այս փառաւոր Յոբելեանի օրը, որ Հայ Եկեղեցոյ և Հայ Ժողովրդի նուիրական օրն է:

Վաճառականների աւագ Արշակ Միլեան
Սարգիս Կաֆիեան
Բարսեղ Եղիազարեանց
Մնացական Մարտիրոսեան
Մկրտիչ Քալանթարեան
Ստեփան Սուլխանեան
Ա. Գազտարեան
Ն. Կիլպէնկեան
Յ. Սէյլանեան
Հայրիկ Աւետիսեան
Թ. 2բ.— Միքայէլ Արափեան
Յար. Խալաթեան
Բախշօ Յարութիւնեան
Գրիգոր Նաշխունեան
Արշակ Բոզարջեան
Խաչ. Աֆրիկեան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— 404—1513—1913
ՈՒՂԵՐՁ
Թիֆլիսի Հայ վաճառականութիւնից

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կաշեպատ կազմի վրա ճնշումով և ոսկյա տառերով գրված է հետևյալը)
Հայ տառերի գիւտի 1500 ամեակի
Եւ տպագրութեան 400 ամեակի առթիւ
Նորին Վեհափառութեան
Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.
Կաթողիկոսին Ամենայն Հայոց
Տփխիսի Հայ վաճառականութիւնից
19 $\frac{12-14}{X}$ 13,

№ 529
ՎԿԱՅԱԳԻՐ
(Լատիներեն)

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 39.5×28.6 սմ.:— **Նյութը՝** դեղնավուն մագաղաթ:— **Կազմը՝** ձեռագիրը զետեղված է սրճագույն կաշվով ծածկված ստվարաթղթյա մի գլանում, որի վրա ճնշումով ոսկեգույն զարդեր են նկարված:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** 15:— **Գծումները՝** մատիտով քաշված:— **Գիրը** լատիներեն նոտրգիր:— **Զարդագրությունը՝** վերևի կենտրոնում նկարված է կարդինալական խորհրդանշանը, գլխարկ, թագ ու գավազան, առյուծ և աստղ և այլն: Գործածված են ոսկեգույն, արծաթագույն, դեղին, կարմիր և կապույտ գույները:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Կարդինալ Պետրուս Կանիսիուս վան Լիերդե:—**Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 12 Մայիսի 1970 թ.:— **Վայրը՝** Վատիկան:— **Ծանոթագրություն՝** գեղեցիկ սույն ձեռագիր վկայագիրը 1970 թ. Մայիսի 12-ին Պողոս Զ Սրբազան Պապի կողմից հանձնըված է Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսին Վատիկանում, մեծադիր ճաճանչավոր մի խաչի հետ, որի մեջ զետեղված է Հայաստանի առաքյալ և առաջին լուսավորիչ Ս. Բարթողիմեոսի աճյուն-մասունքը: Ձեռագիր վկայագրի լուսապատճենը տեսնել «Էջմիածին» ամսագրում, 1970 թ., օգոստոս, էջ 17, իսկ խաչի լուսանկարը՝ էջ 54:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Petrus Canisius Van Lierde
Ordinis sancti augustini
dei et apostolicae sedis gratia
Episcopus Perphyriensis
sacrarii apostolici praefectus
sanctissimi p.n. papae praelaicis domesticus pontificio solio assisten
ac vicarius generalis in civitate Vaticana
Has litteras perlegentibus fidem facimcis atqu· testamur Nos, ad majorem Dei gloriam Sanctorumque Sucrum venerationem, recognovisse particus lam ex ossibus

S. BARTHCLOMAEI, APOSTOLI

—ex authenticis locis extractam, quam in exhibita theca—bene clausa, crystallo munita, funiculo serieo rubri coloris obstricta, et nostro sigillo impresso super cera minio tincta signata, reverenter collocavimus. In horum fidem testimonium ho manu nostra subscriptum, et signo finnatum ei remisimus,
Datum ex Civitate Vaticana, hac die 12 mensis Maii, an. 1970.

(ստորագրություն) +Petrus Canisius van Lierde
Vic. Gen. Summi Pontificis Pauli VI.

(Կարդինալական նույն խորհրդանշանով կնիքը:)

№ 530
ՈՒՂԵՐՁ

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 47.9×34.5×0.1 սմ.: —**Նյութը՝** սպիտակ հաստ ստվարաթուղթ:— **Կազմը՝** ուղերձը զետեղված է ծալովի մի մեծ թղթապանակում, որի չափերն են՝ 50.8×36.2×1 սմ.: Այն սարք-

ված է հաստ ստվարաթղթից, որ ծածկված է մուգ կապույտ կաշվով, որի վրա, երկու երեսում էլ, չորս անկյուններում ճնշումով զարդեր են նկարված: Միջի կողմը կանաչ մետաքս է: Թղթապանակի դրսի երեսին ոսկեգույն տառերով ճնշումով գրված է հետևյալը՝

«Խրիմյան Հայրիկին
Թիֆլիսի հրատարակչական
Ընկերութիւնից
1898 ամի 29 օգոստոսի:» —

Պահպանակներ՝ չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթեր՝** չկա:— **Տողերը՝** 23:— **Գծումները՝** մատիտով քաշված:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** ուղերձն ունի գեղեցիկ երկու ջրանկար: Վերևում երևում են ձյունածածկ երկու Մասիսները, Հայկական պարը, որոնց առջևում է գտնվում Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, վանքի հին պարիսպը և ձախին՝ երկու ծառեր: Գործածված են մոխրագույն, կապույտ, կանաչ և դեղին գույները: Ձեռագրի կենտրոնից մի քիչ վերև, ձախում, նկարված են կաթողիկոսական թագը, խաչն ու գավազանը, Ավետարան, քնար, գիրք, երկրագունդ, թանաքաման, փետուրից գրիչներ և այլն: Գործածված են ոսկեգույն, վարդագույն, կարմիր և կապույտ գույները: Երկրագնդի տակ կա նկարչի ստորագրությունը՝ «Ա. Շամշին»:— **Գրիչը՝** անհայտ: —**Պատվիրատուն՝** Թիֆլիսի Հայերեն գրքերի հրատարակության ընկերություն:— **Ծաղկողը՝** Հարություն Շամշինյան (1856—1914) Թիֆլիսեցի նկարիչ: —**Ժամանակը՝** 29 օգոստոսի 1893 թ.:— **Վայրը՝** Թիֆլիս:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 Մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրիկ,

Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը համայն հայ ժողովրդի հետ միասին անհուն ուրախութիւն է զգում տեսնելով իր պաշտելի Հայրիկին կոչուած բազմելու Հայաստանեայց Եկեղեցու հայրապետական գահի վրայ և իր անսահման խնդակցությունն ու բերկրանքն այլ կերպ չէր կարող արտահայտել, եթէ ոչ բարձրաձայն բացագանչելով՝ կեցցէս Հայրիկ, շնորհաւոր և բարի լինի Քո գալուստը:

Աստուածարեալ Հայրապետ. Դու Քո անխոնջ գործունէութեամբ գրական ասպարիզում առաջնորդ և ուղեցոյց եղար մեզ համար: Դու էիր, Հայրիկ, որ առաջին տպարանը հիմնեցիր Հայաստանի խորքում, առաջին հանդէսը հրատարակեցիր Վասպուրականի խուլ անկիւնում: Դու էիր, որ առաջին անգամ կանոնաւոր դպրոց հաստատեցիր և մի մի առաքեալներ պատրաստեցիր Հայաստանի մէջ լուսաւորութիւն տարածելու համար: Վերջապէս Դու քո հոգեշունչ երկասիրութիւններով մխիթարեցիր և հոգևոր սնունդ մատակարարեցիր Հայաստանի տառապեալ ժողովրդին: Դու միայնակ կատարել ես այն, ինչ որ այժմ ամբողջ ընկերութիւններն են կարողանում անել իրանց բազմաթիւ անդամներով: Եւ ինչ զարմանք. մի՞թէ մեր թոյլ ոյժերը կարող են հաւասարուել արծուի ոյժին:

Մեր ընկերութիւնն ու ժողովուրդը, Վեհափառ Տէր, նոյնպէս անմասն չեն մնացել Քո տուած հոգևոր սնունդից: Քո լուսաւոր մտքի պտուղ երկասիրութիւնները՝ «Դրախտի ընտանիք», «Սիրաք և Սամուէլ» ընկերութեանս հրատարակութեամբ հազարաւոր օրին(ա)կներով արդէն տարածուած են մեր ժողովրդի մէջ և իրաքանչիւր հայի սեղանի զարդն են կազմում: Ընդունիր ուրեմն, Հայրիկ, մեր անհուն երախտագիտութեան և ամենախորին յարգանքի հաւաստիքը և թոյլ տուր մեզ յուսալ, որ հայ ժողովուրդը կ'արժանանայ տեսնել Քո հանճարաւոր մտքի նոր գոհարներ(ը):

Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւն:
Թիֆլիս:
29 օգոստոսի 1893 թ.:

№ 531
ՈՒՂԵՐՁ

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 47.9×34.5×0.1 սմ.: —**Նյութը՝** սպիտակ հաստ ստվարաթուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթեր՝** չկա:— **Տողերը՝** 31:— **Գծումները՝** մատիտով քաշված: — **Գիրը՝** շղագիր::— **Զարդագրություն՝** ուղերձն ունի գեղեցիկ մի ջրանկար: Վերևում երևում են Գևորգյան Ճեմարանի շենքը և պարիսպը, նաև Մասիս սարերն ու Ս. Էջմիածնի Մայր Տաճարը: Գործածված են մոխրագույն, վարդագույն, դեղին և կապույտ գույները: Ձախին երևում են դեղին մի գրակալ, որի վրա կարմիր Ավետարան կա, իսկ ետին էլ՝ հայրապետական մի խաչ ու գավազան և երկու կարմիր դրոշներ, որոնց վերևում էլ գտնվում է կաթողիկոսական կապույտ մի թագ: Գրակալի կողքին և գավազանի տակը կա նկարչի ստորագրությունը՝ «Ա. Շամշին»: Ամբողջ ձեռագիր ուղերձն առնված է բաց կապույտ մի շրջանակում, որ ունի 2.3 սմ. լայնություն: Այս շրջանակը պարունակում է փոքրիկ քառակուսիներ, որոնց մեջը նկարված են զանազան փոքրիկ կենդանիներ:— **Գրիչը՝** անհայտ: —**Պատվիրատուն՝** Մոսկվայի հայ ուսանողներ:— **Ծաղկողը՝** Հարություն Շամշինյան (1856—1914) Թիֆլիսեցի նկարիչ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Մոսկվա:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացվել է Վեհափառ Հայրապետից 16 Մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պաշտելի Հայրիկ,

Քո հարազատ ազգը միասիրտ Քեզ կաթողիկոսական գահը բազմեցնելուց շատ տարիներ առաջ

արդէն սիրել ու գնահատել է Քեզ, որպէս իր ամենամեծ գործչին: Հայ ժողովուրդը չտուեց Քեզ աշխարհիս բարիքներից և ոչ մէկը, որովհետև ինքն էլ զուրկ է նրանցից, չունի ոչ մի բան, որով արժանաւորապէս վարձատրէր Քո անխոնջ և բազմարդիւն գործունէութիւնը: Նա Քեզ ընծայեց միայն «Հայրիկ» անունը և իր այդ միակ պարգևով վկայեց Վասպուրականի Արծուին իր երախտագէտ սրտի անսահման սէրը, պսակեց նրա ազգաշէն գործերի ճակատը:

Դու Քո գործունէութեան նոյնիսկ առաջին քայլերից, պաշտելի Հայրիկ, մարմնացրիր Քո մէջ հոգևորականի ժամանակակից իդէալը: Դու կրօնաւոր անձի առաքինութիւններին սերտ կցեցիր և հասարակական գործչի արժանաւորութիւնները:

Այսօր, երբ հայ հասարակութեան լաւագոյն և կրթուած մասը սկսել է աւելի պարզ ըմբռնել հայկական կեանքի անթիւ կարիքները, ազգի ցաւերն ու դարդերը, այժմ իսկ մենք կարօտ էինք մի այնպիսի արթուն հովուապետի, որ Քեզ նման տոգորուած լինէր լուսաւոր հասարակական ձգտումներով, ունենար անշեղ ու հաստատ բնաւորութիւն և կարեկից ու զգայուն սիրտ:

Դպրոցական և եկեղեցական-վարչական գործերի բարեկարգութիւն, կրթութեան ազգայնութիւն, ուսուցչի ապահովութիւն, սերտ բարոյական կապ ուսահայերի և տաճկահայերի մէջ,—ահա այս և այլ բազմաթիւ խնդիրներ, որոնց լուծումն կարող է տալ մի միայն Քո բարձր բարոյական ոյժը, Քո հզօր բազուկը, Քո հայրենաշունչ խօսքը:

Այն խոչընդոտները, որոնց Դու առաջ պատահում էիր Քո ամբողջ գործունէութեան ընթացքում, այժմ այլ ևս չկան: Այժմ լայն և հարթ է ուղին և Դու անարգել կարող ես անընդհատ ափոել հայկական խաւար կեանքի մէջ լո՛յս, լո՛յս և լո՛յս:

Այս րոպէին, երբ ամբողջ հայ ազգը հրճուում է վերադարձած տեսնելով Սահակ Պարթևի դարը, անտարբեր չի կարող մնալ Մոսկուայի հայ ուսանողութիւնը, որ գիտութեան տաճարում սովորում է յարգել և սիրել լոյսը, մանաւանդ այն լոյսը, որ սառը չէ ձմեռուան արեգակի ճառագայթների նման, այլ կենդանաբեր՝ ինչպէս գարնանային արևը: Հայրիկի լոյսը այդ լոյսից է: Մենք, Մոսկուայի հայ ուսանողներս առ այժմ, երբ դեռ համալսարանական նստարանի վրայ ենք, ոչինչով չենք կարող ապացուցանել մեր անսահման սէրը դէպի հայ ժողովրդի հայրիկը, եթէ ոչ ուխտելով ապրել այնպէս, որ մեր ծերութեան օրերին կարողանանք պարզ երեսով նայել հայ գեղջկին, որի հացով սնուել ենք, համալսարանին, որի մէջ լսել ենք հանրամարդկային իդէալների պատգամներ, և առանց կարմրելու արտասանել, «մենք էլ Խրիմեան Հայրիկի որդիքն ենք»:

Մոսկուայի հայ ուսանողներ

№ 532
ՅՈՒՇԵՐ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՑ

Թերթերը՝ 26:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 28.3×19.9×0.3 սմ.:— **Նյութը՝** գծավոր, դեղնած բարակ թուղթ:— **Կազմը՝** կանաչավուն բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** բոլոր թղթերի կոնակի էջը մաքուր է, գրություն չկա, բացի 17բ թերթից:— **Տողերը՝** 31:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Հարություն Ասատուրի Ղարիբյան (ծն. 1895) Շապին Գարահիսարցի:— **Ժամանակը՝** 1965-ական թթ.:— **Վայրը՝** Վառնա (Բուլղարիա):— **Ծանոթագրություն՝** 1965-ական թվականներին ձեռագիրը հեղինակի կողմից ուղարկված է Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Հեղինակը նկարագրում է Մալաթիայի որբանոցում իր անցկացրած որբանոցային կյանքը և զանազան դեպքեր ու իրողություններ Մեծ Եղեռնի մասին:)

Թ. 1ա.— Խորհրդային Հայաստան գտնուող Նոր Մալաթիացիներուն Հարգելի հայրենակիցներ:

(Հեղինակն այստեղ տալիս է սույն ձեռագիրը գրելու պատճառները:)

Թ. 3ա.— Գողգոթայի Զառիվարը

Մալաթիոյ որբանոցը—Ապոնաներու ժամը 1918:

(Ժամանակին Մալաթիայում մի փոքրիկ մատուռ է եղել, որ պատկանել է կաթոլիկ հոգևորականներին, որոնց տեղացիները «ապոնաներ» ասում էին:)

Թ. 26ա.— Հարգելի Մալաթիացիներ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 25ա.— Յարութիւն Ասատուր Ղարիպեան Շապին Գարահիսարի Ալամոնիկ գիւղէն. Պոլսոյ Գարակէօզեան որբանոցի 1914ի շրջանավարտներէն:

Հասցեն—Վառնա, փողոց Ֆիլիբ Թոթու, թիւ 20:

(Շարունակելի)